ՄՏԱԾԵՔ ԱՏԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պահպանեք ատամների հիգիենայի պատշաճ սովորություններ բոլոր տարիքներում:

Դուք կարող եք օգնել Ձեր երեխային կանխարգելել խոռոչների առաջացումը: Ահա թե ինչպես.

- Անցեք կանոնավոր զննումներ ատամնաբույժի մոտ՝ սկսած 1 տարեկան հասակից: Հարցրեք ատամնային հերմետիկների մասին, որոնք կանխում են ատամների քայքայումը:
- Ատամները խոզանակով և ֆտորային ատամի մածուկով մաքրեք օրը երկու անգամ՝ 2 րոպե:
- Սահմանափակեք շաքար պարունակող սնունդը և ըմպելիքները:

Հնարավոր է, որ Ձեր երեխան պայմանունակ լինի ատամնաբուժական ծառայությունների համար՝ Medicaid-ի և Երեխաների առողջության ապահովագրության ծրագրի (Children's Health Insurance Program (CHIP)) միջոցով: Ծառայությունները ներառում են ատամների մաքրումը, զննումները, ռենտգեն հետազոտությունները, ֆտորը, ատամնային հերմետիկները և պլոմբները:

Ձեր երեխային գրանցելու համար զանգահարեք **1-877-KIDS-NOW (543-7699)** կամ այցելեք **InsureKidsNow.gov** կայքը: Արդեն ընդգրկվածեք ծածկույթում: Օգտագործեք Ատամնաբույժների տեղորոշիչը (Dentist Locator) կամ **InsureKidsNow.gov** կայքը՝ Ձեր մոտակայքում ատամնաբույժ գտնելու համար և զանգահարեք այսօր ատամնաբույժի մոտ այց նշանակելու համար:

ՆՇՈՒՄՆԵՐ:

InsureKidsNow.gov

Paid for by the U.S. Department of Health & Human Services

CMS Product No. 11774-AR
January 2023